ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներկայ համարով լրանում է «Վէմ»-ի չորրորդ տարեշրջանը, աւելի ճիշտ՝ չորրորդ վեցեակը, որովհետեւ մեր բաժանորդագրութիւնը, ինչպէս յայտնի է, տարեկան չէ, այլ՝ ըստ վեց համարի, վեց գիրքը մէկ շրջան:

Պէտք է խոստովանուել, որ հեշտ չէր մեր անցած ճամբան: Մանաւանդ վերջին տարիների նիւթական ծանր պայմաններում, երբեւ հետեւանք տնտեսական սուր տագնապի, «Վէմ»-ն եւս շատ դժուարութիւններ կրեց, բայց այն ջերմ համակրանքն ու սէրը, որ նա գտաւ ընթերցողների եւ հայ մշակոյթով ապրող մտաւորականութեան կողմից, մոռացնել են տալիս ամէն զրկանք ու նեղութիւն: «Վէմ»-ը այսուհետեւ եւս հրատարակուելու է նոյն ուղղութեամբ եւ նոյն բովանդակութեամբ, ինչ որ մինչեւ այժմ՝ լայնօրէն բանալով իր էջերը բոլոր նրանց առջեւ, որոնք սիրում են հայ մշակոյթն ու պատմութիւնը եւ պատրաստ են ծառայելու նրանց զարգացման:

Պէտք է ասենք նաեւ, որ բարոյական տեսակէտից մենք կատարելապէս գոհ ենք «Վէմ»-ից. նա իր շուրջ համախմբեց եւ ունի մեր մտաւորականութեան ընտրանին եւ ընթերցողների լայն շրջաններ: Նոյնը չենք կարող ասել, դժբախտաբար, նիւթականի մասին. եթէ բաժանորդները ժամանակին վճարէին բաժնեգինը, «Վէմ»-ը կը լինէր ինքնապահ, ո՛չ մէկ նեղութիւն չէր քաշի եւ կանոնաւորապէս ու ժամանակին լոյս կը տեսնէր: Ցաւն այն է, որ հայ մարդը գիրք ունենալ եւ կարդալ շատ է սիրում, բայց դրամ վճարել չի սիրում: Ընդհանուր եւ դժբախտ ցաւ է այս, որ չգիտենք, թէ երբեւիցէ պիտի դարմանուի: Նոր շրջանի չէմքին մենք մէկ խնդիր ունենք միայն մեր բաժանորդներից՝ ժամանակին ուղարկել իրենց բաժնեգինը, առանց սպասելու յիշեցումների: Այդքան փոքրիկ գոհողութեամբ, եթէ այդ գոհողութիւն է, նրանք մեծապէս կը նպաստեն «Վէմ»-ի կանոնաւոր հրատարակութեան:

«Վէմ»-ը ապրում է միայն բաժանորդագրութեամբ. իր բաժանորդների թիւը բաւական է հրատարակութիւնը ապահովելու համար: Կողմնակի հասոյթներ մենք չունենք, բացի մի քանի ինքնարուխ եւ պատահական նուէրներից: Հաճոյքով արձանագրում ենք հինգ տարուայ ընթացքում ստացած այդ գումարները.— 300 ֆր. հանգուցեալ Գ. Շահլամեանից (Մարսէյլ), 200 ֆիւսս հանգուցեալ Դոն Խուան Պէնէյեանից (Բ. Այրէս), 25 տոլար Տր. Ս. Քէշիշեանից (Տիթրո-

A.R.A.R.@

յիթ), 50 տոլար Ս. Աւտոյեանից (Նիւ Եորք)։ Այս բոլոր դումարների դիմաց «ՎԷՄ»-ը ուղարկուած են Սիբիրայի, Իրաքի եւ Իրանի դպրոցներին եւ այլ հաստատութիւններին։ Այս, ինչպէս նաեւ առանձին «ՎԷՄ» նուիրողներին խմբագրութիւնս յայտնում է իր ջերմ շնորհակալութիւնը։ Սրտագին շնորհակալութիւն նաեւ մեր ընկեր – դործակալներին, որոնք, առանց շահի ակնկալութեան, իրենց թանդագին աջակցութեամբ մեծապէս օգնում են մեր հանդէսի գոյութեան եւ զարգացման։

«ՎԷՄ»-ի նախորդ տարիների համարները մնացել են սահմանափակ թիւով, այդ պատճառով խմբագրութիւնս այլեւս անկարող է դեղչուած գնով ուղարկել։ Սկզբից՝ ամբողջ հաւաքածոն ստանալ ուզող բաժանորդները այսուհետեւ պէտք է վճարեն նշանակուած լրիւ բաժնեդինը։

«ՎԷՄ»-Ի ՆՈՐ ՀԱՍՑԷՆ

Բաժանորդներից, դործակալներից եւ բոլոր «ՎԷՄ»-ի հետ դործ ունեցողներից խնդրում ենք ի նկատի ունենալ մեր նոր հասցէն.—

S. Ter - Tovmassian,
79bis, Rue des Chesneaux
Montmorency (S. et O.)
(France)

digitised by